ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/3462 «28» 10 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագիծի N1 հավելվածում նշված ծառայությունները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակ, Վ.Մեժունցին, մինչև 2014 թ. նոյեմբերի 7-ը, ժամը 15:00-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակում, 2014 թ. նոյեմբերի 7-ին, ժամը 15:00-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝ Վ.Մեժունց
հեռ. 514-194

Հավելված_**1**
«ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
Երևանի քաղաքապետարանի կողմից N «ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70» ծածկագրով հայտարարված ընթացակարգի և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--- ---
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված-2
«ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի

նախագիծը, ...-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

Չափա-բաժիննե-րի համարն-երը	**Գնման առարկայի անվանումը**	**Արժեք***	**ԱԱՀ****	**Առաջարկված գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1				

****3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***
*****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70

ք. Երևան « » « » 20 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Ռ. Թադևոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 07.04.2011 թվականի թիվ 1211-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և « » ---------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ------, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված էլեկտրական և կենցաղային սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորություն (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (____տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

4.3 2014 թվականի դեկտեմբեր ամսին մատուցված ծառայության դիմաց դրամական միջոցների փոխանցումը կատարվում է միանվագ կարգով, որպես կանխավճար, մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը, որը մարվում է հանձնման–ընդունման արձանագրությամբ՝ մինչև 2015 թվականի հունվար ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

******* Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.9 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	**Կ ա տ ա ր ո ղ**
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » « » 20 թ. կնքված
N ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70 գնման պայմանագրի

<u>Î º ÊÜÆÎ ² Î ²Ü ´ÜàôÂ ² ¶Æð</u>

Հ/Հ	Ծառայության *					
	անվանումը	մատուցման տեխնիկական բնութագիրը	չ/մ	առավելագույն քանակը	մատուցման ժամկետը	արդյունքի երաշխիքային ժամկետը
1	Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում					
1.1.	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում	հատ	20	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
1.2.	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler	հատ	15	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
1.3.	MB փոխարինում ներառյալ Ինտել 45 չիպսեթ,ՊՍԻ-էքսպ(Intel 38 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	MB փոխարինում ներառյալ Ինտել 45 չիպսեթ,ՊՍԻ-էքսպ(Intel 38 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	8	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
1.4.	MB փոխարինում ներառյալ Ինտել 35 չիպսեթ,ՊՍԻ-էքսպ(Intel 35 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	MB փոխարինում ներառյալ Ինտել 35 չիպսեթ,ՊՍԻ-էքսպ(Intel 35 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	10	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
1.5.	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Քուադ Ք8200 (2.66ԳՀՀg) , 4096, 1333ՄՀՀg (Core 2 Quad Q8200 (2,66GHz), 4096, 1333MHz), կամ համարժեքը	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Քուադ Ք8200 (2.66ԳՀՀg) , 4096, 1333ՄՀՀg (Core 2 Quad Q8200 (2,66GHz), 4096, 1333MHz), կամ համարժեքը	հատ	16	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
1.6.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՁ (DDR2 2048M 667/800MHZ),կամ համարժեքը	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՁ (DDR2 2048M 667/800MHZ),կամ համարժեքը	հատ	20	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
1.7.	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 500Գբ ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 500 Gb SATA, 7200 rpm),կամ համարժեքը	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 500Գբ ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 500 Gb SATA, 7200 rpm),կամ համարժեքը	հատ	12	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
1.8.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալՍնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450վ (Power suply unit for P4 Case 450W),կամ համարժեքը	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալՍնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450վ (Power suply unit for P4 Case 450W),կամ համարժեքը	հատ	3	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր

1.9.	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	հատ	20	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
1.10.	LCD լամպի փոխարինում	LCD լամպի փոխարինում	հատ	5	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
2	**Լազերային տպիչի վերանորոգում և սպասարկում**					
2.1.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ (HP/Canon կամ համարժեքը)	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ (HP/Canon կամ համարժեքը)	հատ	8	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
2.2.	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ (HP/ Canon կամ համարժեքը)	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ (HP LJ, Canon LBP կամ համարժեքը)	հատ	4	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր
2.3	Քարթրիջների լիցքավորում		հատ	40	Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուն հաջորդող օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օր	Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից հաշված 180 օրացուցային օր

Գ Ն Ո Ր Դ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՎՀՀ 02593108

(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
« » « » 20 թ. կնքված
N ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70 գնման պայմանագրի

¶ÜØ²Ü Ä²Ø²Ü²Î²òàôÚò

ՀՀ ¹ñ³Ù

Հ/Հ	Ձեռք բերվող ապրանքի, անվանումը	Նախատեսվում է գնել 2014թ. ընթացքում	Ընդամենը
		IV-րդ եռամսյակ /Նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 25-ը /	Գինը
1	Կենտրոն վարչական շրջանի Սոցիալական օգնության ծառայությունների գրասենյակի /պատվիրակված լիազորություններ/ կարիքների համար էլեկտրական և կենցաղային սարքավորումների սպասարկման ծառայություններ		
	ԸՆԴԱՄԵՆԸ		

Գ Ն Ո Ր Դ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՎՀՀ 02593108

(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » « » 20 թ. կնքված
N ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ð/Ð	Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի,ծառայության անվանումը	Նախատեսված է ֆինանսավորել Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեից, այդ թվում						ÀÝ¹³Ù»ÝÁ ï³ñ»Ï³Ý
		III եռամսյակ			IV եռամսյակ			
		ÑáõËçë	û·áë ï áë	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	…..	…..	…..	100%	100%	100%	100%

* ì×³ñÙ³Ý »ÝÃ³Ï³ ·áõÙ³ñÝ»ñÁ Ý»ñÏ³ïí³Í »Ý ³×áÕ³Ï³Ý Ï³ñ·áí

Գ Ն Ո Ր Դ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՎՀՀ 02593108

(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
« » « » 20 թ. կնքված
N ԵՔ-ՇՀԾՁԲ-14/70 գնման պայմանագրի

Գնորդ	Վաճառող
_____	_____
_____	_____
_____	_____
հասցե_____	հասցե_____
հհ_____	հհ_____
_____	_____
. .. .	հմhh

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____» 2____թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____ 2____թ

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ _____

Գնորդն, ի դեմս _____ և Մատակարարն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ ապրանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Վաճառողը «____» _____ 2____թ.-ից «____» _____ 2____թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
ազգանուն, անուն _____	ազգանուն, անուն _____